

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ փաստաբանական դպրոցի 2014 թվականի գարնանային հոսքի ընդունելության քննության շտեմարանում ներառված թեստերի մշակման մեթոդաբանության վերաբերյալ

ք. Երևան

04.11.2013

Ընդգծելով, որ թեստը դիմորդի գիտելիքի գնահատման գործիք է, որը բաղկացած է թեստային առաջադրանքներից և հնարավոր պատասխաններից:

Հաստատելով, որ թեստային առաջադրանքները կազմում են թեստի բաղկացուցիչ մասը, ուստի պետք է այնպիսի որոշակիությամբ սահմանված լինեն, որպեսզի թեստը լրացնողի՝ դիմորդի մոտ թյուրըմբռնում չառաջանա:

Կարևորելով, որ թեստային առաջադրանքները պետք է համապատասխանեն առաջադրված պահանջներին, բխեն համապատասխան ուղղվածությունից և ունենան բարդության որոշակի աստիճան:

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության փաստաբանական դպրոց» հիմնադրամի ընդունելության քննության կազմակերպման և հանձնման կարգի 4.1 կետով՝ ՀՀ փաստաբանական դպրոցի 2014 թվականի գարնանային հոսքի ընդունելության քննության հանձնաժողովը (այսուհետև՝ Հանձնաժողով)

Որոշեց.

Սահմանել ՀՀ փաստաբանական դպրոցի 2014 թվականի գարնանային հոսքի ընդունելության քննության շտեմարանում ներառված թեստերի մշակման մեթոդաբանությունը՝ համաձայն Հավելված 1-ի:

Հանձնաժողովի նախագահ՝

ստորագրություն

Ն. Յու. Բաղդասարյան

անդամներ՝

ստորագրություն

Ա. Գևորգյան

ստորագրություն

Ն. Սահակյան

ստորագրություն

Լ. Մուրադյան

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅԱՆ

ՀՀ փաստաբանական դպրոցի 2014 թվականի գարնանային հոսքի ընդունելության քննության
շտեմարանում ներառված թեստերի մշակման

ՀՀ փաստաբանական դպրոցի 2014 թվականի գարնանային հոսքի ընդունելության
քննության ժամանակ թույլատրելի են ստորև թվարկված թեստերի կազմման
մեթոդները՝

1) մեկ ճիշտ պատասխանի ընտրությամբ առաջադրանքներ.

Այս դեպքում առաջարկվող 4 պատասխաններից միայն մեկն է ճիշտ:

2) մեկ սխալ պատասխանի ընտրությամբ առաջադրանքներ.

Այս դեպքում առաջարկվող 4 տարբերակներից մեկը սխալ է, իսկ մյուս 3-ը՝
ճիշտ:

3) առավել ճիշտ պատասխանի ընտրությամբ առաջադրանքներ.

Այս դեպքում առաջարկված տարբերակներից անհրաժեշտ է ընտրել առավել
ճիշտ պատասխանը՝ համեմատելով մյուսների հետ:

4) առավել սխալ պատասխանի ընտրությամբ առաջադրանքներ.

Այս դեպքում առաջարկված տարբերակներից անհրաժեշտ է ընտրել առավել
սխալ պատասխանը՝ համեմատելով մյուսների հետ: